ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Վ/90-2023
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
28 ապրիլի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Վարչապետ	Ն. Փաշինյան

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար	Գ. Սանոսյան
ՀՀ Տավուշի մարզպետ	Հ. Ղալումյան
Պետական վերահսկողական ծառայության ղեկավար	Ռ. Պետրոսյան
Վարչապետի աշխատակազմի տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչության պետ	Կ. Մուխսյան
ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ	Ն. Ղուշչյան
ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ	Ա. Հովակիմյան
Պաշտպանության նախարարության 4-րդ բանակային կորպուսի հրամանատար	Ա. Ցականյան
Ազգային անվտանգության ծառայության Տավուշի մարզային վարչության պետ	Հ. Ղալումյան
Ներքին գործերի նախարարության Տավուշի ոստիկանության մարզային վարչության պետ	Ա. Մկրտչյան
Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ	Վ. Փիրումյան
ՀՀ Տավուշի մարզի դատախազ	Գ. Ալոյան
Քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության պետ	Ա. Հարությունյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար	Ա. Գևորգյան
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ	Ա. Խաչատրյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ	Մ. Մելքումյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ	Վ. Սուքոյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ	Մ. Հարությունյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ	Ռ. Տիգրանյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչության պետ	Ա. Գալստյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ	Ա. Բաբլումյան

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ	Ա. Սարգսյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ	Գ. Հարությունյան
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ	Ա. Նազարյան

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Զեկույցներ ներկայացրեցին՝

1) ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը՝ ներկայացնելով 2022 թվականի ընթացքում մարզում իրականացված ծրագրերի մասին տեղեկատվություն, մասնավորապես, նշեց, որ.

ա. վարչատարածքային բարեփոխումների շրջանակում 62 համայնքի միավորման արդյունքում համայնքների թիվը կազմել է 4-ը: Նշվածի արդյունքում փոփոխություններ են տեղի ունեցել համայնքապետարանների հաստիքների, համայնքային ծառայողների և այլ ոլորտներում: Համայնքապետարանների հաստիքների թիվը կրճատվել է 32 տոկոսով, որի արդյունքում՝ աշխատավարձերը բարձրացվել են միջինը 20 տոկոսով: Իրականացվել է 60 համայնքային ծառայողների վերապատրաստում, 4 համայնքներում իրականացվել է իրավական վերահսկողություն: Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները հիմնականում շտկվել են.

բ. բացի 4 համայնքապետարանից, գործում է քաղաքացիների սպասարկման ևս 2 գրասենյակ՝ Կողբ և Այրում խոշոր բնակավայրերում,

գ. համայնքների խոշորացումից հետո աղբահանության պատկերը բարելավվել է: Աղբահանություն իրականացնող աղբավայրերի թիվն ավելացել է 5-ով, իսկ գործող աղբավայրերը կրճատվել են մոտավորապես 30-ով.

դ. համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման պլանավորումը 2022 թվականին 2021 թվականի նկատմամբ աճել է 16 տոկոսով, իսկ փաստացի հավաքագրումը՝ 11 տոկոսով.

ե. մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ է գտնվում 76 դպրոց, որից 17 դպրոց անբավարար վիճակում է (11 դպրոց ունի վերանորոգման, իսկ 6 դպրոց՝

հիմնովին կառուցման կարիք): Ներկայումս Դովեղ, Կիրանց և Գանձաքար բնակավայրերում կառուցվում է 3 դպրոց, իսկ Նավուր և Գոշ բնակավայրերում նախատեսվում է 2 դպրոցի կառուցում: Պարտադիր ատեստավորված ուսուցիչների թիվը կազմում է 809-ը, իսկ կամավոր ատեստավորվածներինը՝ 2021-2022թթ. ընթացքում 242, որից թույլատրելի շեմը հաղթահարել է 72 ուսուցիչ: Արդյունքում, գրանցվել է աշխատավարձի աճ՝ միջինում 83.0 հազ. ՀՀ դրամ.

զ. 2021-2022թթ. ուսումնական տարվա շրջանավարտների 41 տոկոսը, կամ դիմորդների 67.8 տոկոսն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն.

է. «ՀՀ վարչապետի գավաթ» մրցաշարին մարզից մասնակցել են 2 մարզաձևով.

ը. մանկապարտեզ այցելող սաների թիվը 3420 է, սակայն շուրջ 700 երեխա զրկված է այդ հնարավորությունից՝ փոքր բնակավայրերում մանկապարտեզների բացակայության պատճառով.

թ. քաղաքաշինության ոլորտում 2022 թվականին շինթույլտվությունների թիվն էականորեն բարձրացել է, ինչ վերաբերում է մասնավոր ներդրումներին, ապա այն հիմնականում ուղղված է տուրիզմի ոլորտին: 2022 թվականին գրանցվել է բազմա-բնակարան շենքերի շինարարության մեկնարկ.

ժ. կատարվել են ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ, մասնավորապես, ջրամատակարարման և ջրահեռացման, գազիֆիկացման, էներգետիկայի և ոռոգման ծրագրեր (ապահովվել է 3 գյուղի ամբողջական ջրամատակարարումը, 2 դպրոցի և 375 տնտեսության գազիֆիկացումը, ինչպես նաև 345 հա նոր հողատարածքների ոռոգումը, «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են էլեկտրաէներգիայի տատանումների մեղմման աշխատանքներ, գրանցվել է արևային էներգիա օգտագործող տնտեսությունների թվի աճ 98-ով): Ճանա-պարհաշինության բնագավառում 2022 թվականին մարզում կառուցվել է 90 կմ ճանա-պարհ: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով 2022 թվականին մարզում իրականացվել են 1.1 մլրդ դրամի ծրագրեր.

2) ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Արթուր Հովակիմյանը՝ նշելով, որ.

ա. գյուղատնտեսական նշանակության հողերը մարզի ընդհանուր հողատարածքի հաշվեկշռում կազմում են ավելի քան 110.6 հազ. հա: 2022 թվականի ընթացքում ցանքսը կազմել է 5333 հա՝ 2021 թվականի համեմատ 250 հա-ով ավել, աշնանացան է կատարվել

3620 հա հողատարածքում՝ 2021 թվականի համեմատ 1210 հա-ով ավել, հիմնվել և վերականգնվել է 203 հա պտղատու այգի, կաթիլային և շղթային ոռոգումը ներդրվել է 230 հա հողատարածքի վրա.

բ. մթերվել է 6270 տոննա խաղող և 1203 տոննա բանջարեղեն, պտուղ, հատապտուղ: Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է շուրջ 46.0 մլրդ ՀՀ դրամ, որը 2021 թվականի համեմատությամբ ավելացել է շուրջ 600.0 մլն ՀՀ դրամով.

գ. անասնապահության ոլորտում ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ միջոցառումները պետպատվերի շրջանակներում կատարվում են համաձայն ժամանակացույցի.

դ. մարզում գործող 4 սպանդանոցից 2-ը միջին հզորության են.

ե. գյուղատնտեսական ոլորտի պետական օժանդակության շրջանակներում բնակչությանը տրամադրվել է շուրջ 4.94 մլրդ ՀՀ դրամ, որից օգտվել է 3575 շահառու: Ծրագրերն իրականացվել են 11 ուղղությամբ (ավելի քան 2000 շահառու իրականացրել է 2824 հա աշնանացան, 578 հողօգտագործող ձեռք է բերել ընդհանուր 170 տոննա պարարտանյութ, 24 շահառուի կողմից հիմնվել է ընդհանուր 59 հա ինտենսիվ այգի, ձեռք է բերվել 40 միավոր գյուղատնտեսական տեխնիկա և այլն).

զ. պետական և համայնքային հողերից տրվել է վարձակալության 3071 հա, շուրջ 37.0 մլն ՀՀ դրամ մուտք է եղել համայնքային բյուջե: Սահմանամերձ չօգտագործվող հողատարածքները կազմում են 11412 հա, որից՝ 7210 հա-ը վարելահողեր են: Աճուրդով օտարվել է 77.18 հա հողատարածք, պետական և համայնքային բյուջեներ է մուտքագրվել 811.6 մլն ՀՀ դրամ.

է. պետպատվեր իրականացնող բժշկական հաստատությունների թիվը 28-ն է, որից 21-ը մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ են, 22-ի շենքային պայմանները բավարար են, 2-ը ենթակա են նորոգման, 4-ը՝ կառուցման: Ներկայացվեցին տվյալներ նաև մարզի առողջապահական բյուջեի, բժիշկների, միջին և կրտսեր բուժանձնակազմի, մահճակալների ֆոնդի, ստացիոնար բուժօգնություն ստացած բուժառուների և ծնունդների թվի մասին.

ը. առողջապահական ծրագրերի իրականացման, բժշկական սարքավորումների և գույքի ձեռքբերման համար ծախսվել է 395.2 մլն ՀՀ դրամ, լուծվել են կարևորագույն

խնդիրներ (հեմոդիալիզի բաժանմունքի ստեղծում և համակարգչային տոմոգրաֆի ձեռքբերում Իջևան ԲԿ-ի կողմից).

թ. սոցիալական աջակցություն տրամադրվում է սոցիալապես անապահով և բազմազավակ ու զոհվածների ընտանիքներին, հաշմանդամներին և բնակիչներին, որոնք ունեն հրատապ լուծման խնդիրներ: 1414 քաղաքացու տրամադրվել է շուրջ 80.0 մլն ՀՀ դրամ սոցիալական աջակցություն: Իրականացվել է սեզոնային զբաղվածության խթանման 199 ծրագիր, հատկացվել է շուրջ 25.0 մլն ՀՀ դրամ: 30 ընտանիքի աջակցություն է տրամադրվել նաև անասնագլխաքանակի տեսքով: Ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ 23 անձի համար կազմակերպվել են մասնագիտական ուսուցման դասընթացներ, որոնց արդյունքում՝ 19-ը տեղավորվել է աշխատանքի.

ժ. մարզի միջպետական սահմանները կազմում են 250 կմ, որից 207 կմ-ով սահմանակից է Ադրբեջանի Հանրապետության հետ, 43 կմ-ով՝ Վրաստանի հետ: 46 բնակավայր համարվում է սահմանամերձ: Մեծ ուշադրություն է դարձվում պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտի հարցերին, մշակված և հաստատված են աշխատանքային ռեժիմների փոխադրման, զորահավաքի, զորահավաքի անցկացման, զինվորական կառույցների հետ փոխհամագործակցության, քաղաքացիական պաշտպանության և վտանգավոր տարածքներից բնակչության տարհանման պլաններ.

3) ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը՝ ներկայացնելով, որ.

ա. արտաքին կապերի և միջազգային համագործակցության շրջանակներում դեռևս 2011 թվականին ՀՀ Տավուշի մարզի և Գերմանիայի Ռեգեն շրջանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի արդյունքում՝ ստեղծվել է «ՀՀ Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ն: Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում 2011 թվականի մարտին Ֆրանսիայի Օդը Սեն նահանգի և ՀՀ Տավուշի մարզի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի արդյունքում՝ Իջևան խոշորացված համայնքում հիմնվել է խոշոր եղջերավոր անասունների ֆերմա, և յուրաքանչյուր տարի իրականացվում է ֆինանսավորում: Նշված հուշագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականը: Սույն թվականին Ծաղկաձորում կայացած հայ-ռուսական միջխորհրդարանական հանձնաժողովի նիստի ընթաց-

քում ՀՀ Տավուշի մարզի և ՌԴ Կրասնոյարսկի երկրամասի միջև կնքվել է համագործակ-ցության հուշագիր, ինչպես նաև արդյունավետ համագործակցություն է իրականացվում այլ միջազգային կառույցների հետ.

բ. 2018-2022 թվականներին իրականացվել է 63 սուբվենցիոն ծրագիր՝ 6.86 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ (ՀՀ պետական բյուջեից՝ 4.1 մլրդ ՀՀ դրամ, համայնքից՝ 2.39 մլրդ ՀՀ դրամ, այլ ներդրողներից՝ 368.6 մլն ՀՀ դրամ համաֆինանսավորմամբ): 2018-2022 թվականների սուբվենցիոն ծրագրերի ոլորտներից առանձնացվեցին ասֆալտապատման/սալարկման (ընդհանուր արժեքը կազմում է 3.839 մլրդ ՀՀ դրամ, ընդ որում՝ սալարկմանը բաժին է ընկնում շուրջ 1.0 մլրդ ՀՀ դրամ) և բնակարանաշինության, էներգաարդյունավետ բնակարանների ոլորտները (ընդհանուր արժեքը կազմում է 1.130 մլրդ ՀՀ դրամ, որի արդյունքում իրականացվել է 8 բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ երեսպատման աշխատանքներ) .

գ. 2018-2022 թվականների սուբվենցիոն ծրագրերն ըստ համայնքների հետևյալն են՝ Դիլիջան (8 ծրագիր՝ 1.45 մլրդ ՀՀ դրամ), Նոյեմբերյան (13 ծրագիր՝ 0.86 մլրդ ՀՀ դրամ), Իջևան (28 ծրագիր՝ 2.0 մլրդ ՀՀ դրամ) և Բերդ (14 ծրագիր՝ 2.53 մլրդ ՀՀ դրամ): 2022 թվականին հաստատվել է 16 սուբվենցիոն ծրագիր՝ 4.3 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, ՀՀ պետական բյուջեի մասնաբաժինը կազմում է 2.4 մլրդ ՀՀ դրամ, համայնքի մասնաբաժինը՝ 1.9 մլրդ ՀՀ դրամ: Համայնքների կողմից 2023 թվականին սուբվենցիոն ծրագրերի համար ներկայացվել է 28 նախնական հայտ՝ 97 ենթածրագրով՝ 7.5 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ: 2023 թվականին նախատեսված սուբվենցիոն ծրագրերն ըստ համայնքների հետևյալն են՝ Նոյեմբերյան (8 ծրագիր՝ 1.71 մլրդ ՀՀ դրամ), Դիլիջան (6 ծրագիր՝ 2.01 մլրդ ՀՀ դրամ), Իջևան (5 ծրագիր՝ 2.24 մլրդ ՀՀ դրամ), Բերդ (1 ծրագիր՝ 0.14 մլրդ ՀՀ դրամ): Սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման նպատակով ստեղծված աշխատանքային խումբն իրականացրել է 160 և ավելի դիտարկում: Ուսումնասիրված 22 ծրագրից 15-ում հայտնաբերվել է 15 թերություն, վերացվել են բոլորը, ինչպես նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ մշտադիտարկված 12 ծրագրում հայտնաբերվել է 6 թերություն, բոլորը վերացվել են.

դ. կարևոր հիմնախնդիրներից է բնապահպանության խնդիրը, մասնավորապես, անտառահատումները, որոնց թիվը 2021 թվականի հետ համեմատությամբ նվազել է 59-ով:

28 հա հողատարածքի վրա իրականացվել է ծառատունկ՝ ընդհանուր 17.0 մլն ՀՀ դրամ արժողությամբ.

ե. տարեցտարի լուրջ խնդիր է դառնում բնակչությանը վառելափայտով ապահովելը: 2022 թվականի ընթացքում անտառտնտեսությունների կողմից բնակչությանը տրամադրվել է շուրջ 43.0 հազ. խմ վառելափայտ, սակայն պահանջարկը կրկնակի անգամ ավել է եղել.

զ. աղբավայրերը չեն համապատասխանում չափանիշներին, և խնդրի լուծումն աղբի վերամշակման արտադրամաս հիմնելու մեջ է.

է. հեռագնա արոտների հասանելիության և բաշխվածության հետ կապված խնդիրների կարգավորման նպատակով նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ, և առկա են բանավոր համաձայնություններ խնդիրներին լուծումներ առաջարկելու ուղղությամբ.

ը. 2022 թվականի բյուջեն կազմել է 8.2 մլրդ ՀՀ դրամ, որի կատարողականը կազմում է 98.17 տոկոս:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոս-յանը՝

1.1. առաջարկեց ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրամադրվող դոտացիաների ու սուբվենցիաների չափը պայմանավորել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման տոկոսով, ինչպես նաև հաշվի առնել համայնքի ղեկավարի աշխատավարձը.

1.2. նշեց, որ համայնքների կարողությունները բավարար չեն աղբահանության և աղբավայրերի տեղորոշման հարցերը լուծելու համար ու նշված խնդիրների լուծման ուղղությամբ Կառավարությունն արդեն իսկ աշխատանքներ է տանում.

2) ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը՝

2.1. նշեց, որ հեռագնա արոտավայրերի արդյունավետությունը բարձրացնելու և համայնքների եկամուտներն ավելացնելու ուղղությամբ անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ: Քանի որ արոտավայրերի պայմանագրերն անասնապահների հետ կնքվում են հեկտարներով, առաջարկեց պայմանագրերը կնքել անասունների գլխաքա-նակով.

2.2. առաջարկեց քննարկել համայնքներում ամբուլատորիաների տնօրենների՝ օրենքով սահմանված կարգով 65 տարեկանից բարձր տարիքում պաշտոնավարելը չթույլատրելու դրույթը (մասնավորապես, տարիքային սահմանափակումը) վերանայելու հնարավորության հարցը.

3) ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Արթուր Հովակիմյանը նշեց, որ տեղական սպիտակ քարը ճանապարհների թեք հարթությունների շինարարության համար պիտանի չէ օգտագործել (հատկապես ձմռանը կիրառելի չէ).

4) ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանն առաջարկեց մարզի դպրոցներում բաշխվող սննդում տեղական միս օգտագործել:

3. Վարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանին՝

1.1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի և Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի հետ համատեղ մինչև 2023 թվականի ավարտը դիտարկել օրենսդրական համապատասխան կարգավորումների միջոցով համայնքների ղեկավարների աշխատավարձերի բարձրացման հնարավորության հարցը՝ սահմանելով աշխատավարձի նվազագույն շեմ և կիրառելով աշխատավարձի հաշվարկման տարբեր գործակիցներ, օրինակ՝ համայնքների տարածքը, բնակչության ու բնակավայրերի թիվը, բյուջեի կատարողականը, սեփական եկամուտների հավաքագրման տոկոսը, կապիտալ ծախսերի աճը կամ այլ գործոններ, առաջարկել լուծումներ և արդյունքները ներկայացնել Վարչապետին.

1.2. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի և Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի հետ համատեղ դիտարկել դեպի տարբեր զբոսաշրջային օբյեկտներ, արոտավայրեր, խոտհարքներ կամ բնակավայրերից դուրս գտնվող գյուղատնտեսական հողեր տանող, ինչպես նաև ներբնակավայրային որոշ ճանապարհների կառուցման նպատակով սալիկապատ և գրունտային ճանապարհների՝ միջազգայնորեն հաստատված ստանդարտի և տեխնոլոգիաների ՀՀ-ում ներդրման ու զարգացման հնարավորության հարցը և արդյունքները ներկայացնել Վարչապետին.

1.3. Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի հետ համատեղ, նկատի ունենալով խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն արոտավայրեր տանելու մշակույթի վերացման, գլխաքանակը ֆերմաններում պահելու և անասնակերն այնտեղ մոտեցնելու ապագա միտումները, քննարկել առկա ծավալով արոտավայրերի որպես արոտ պահպանելու նպատակահարմարության հարցը, այնուհետև կլիմայական և ռելիեֆային տեսանկյունից հարմար գոտիներում նման արոտավայրերն ինտենսիվ այգիների վերածելու հեռանկարը և նպատակահարմարությունը՝ միաժամանակ, հստակեցնելով մանր եղջերավոր անասնապահության ռազմավարական մոտեցումները, և արդյունքները ներկայացնել Վարչապետին.

1.4. դիտարկել ոլորտային ռազմավարությունները (այդ թվում՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից մշակված և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված ռազմավարությունը) և դրանցից բխող միջոցառումները ՀՀ մարզերում ներդնելու և, մարզային առանձնահատկություններով պայմանավորված, մարզային մակարդակում դրանք իրագործելու հնարավորության հարցերը և արդյունքները ներկայացնել Վարչապետին.

1.5. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի և Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի հետ համատեղ քննարկել ՀՀ բոլոր մարզում տիպային նախագծերի հիման վրա երեխաների և մեծահասակների համար լողավազան, ֆիթնես և տարբեր մարզաձևերի դասավանդման ենթակառուցվածքներ ներառող մոդուլային մարզահամալիրներ կառուցելու հնարավորությունը՝ դիտարկելով դրանց շահագործման հանձնելուց հետո մասնագիտացված մասնավոր ընկերությունների կամ ֆեդերացիաների կոնցեսիոն կառավարմանը հանձնելու հարցը, և արդյունքների վերաբերյալ զեկուցել Վարչապետին.

2) Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին՝

2.1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի և Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի հետ համատեղ միջոցներ ձեռնարկել պետական ծրագրերի իրականացման շրջանակներում կազմակերպված մրցույթներում հաղթած,

սակայն պարտականությունները չկատարող կապալառուների հետ պայմանագրերը խզելու, նոր կապալառուներ ընտրելու և շինարարական աշխատանքները պատշաճ կերպով շարունակելու ուղղությամբ՝ նպատակ ունենալով նաև լավարկել գնումների կազմակերպման առկա ուղեցույցը, և արդյունքները ներկայացնել Վարչապետին.

2.2. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի և Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի հետ համատեղ դիտարկել ՀՀ բոլոր համայնքների մայթերի սալիկապատման նպատակով բետոնե սալիկների փոխարեն յուրաքանչյուր բնակավայրի կոլորիտին համապատասխան տեղական բնական քարե սալիկներին նախապատվությունը տալու և դրանով պայմանավորված նաև քարե սալիկների ինքնարժեքն առավելագույնս նվազեցնելու հարցերը և արդյունքները ներկայացնել Վարչապետին.

2.3. Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի և, անհրաժեշտության դեպքում՝ այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ՝

ա. որպես ռազմավարական թիրախ դիտարկել ինտենսիվ այգիների և խելացի անասնագոմերի ծրագրերի առավելագույնս խթանումը և համապատասխան միջոցներ ձեռնարկել հողերը հնարավորինս մեծ ավելացված արժեքով գյուղատնտեսության համար օգտագործելու ուղղությամբ.

բ. հետևողական լինել տնամերձ այգիների որակի բարձրացմանն ուղղված (հին ծառերը նորով փոխարինելու և կաթիլային ոռոգման համակարգի ներդրմամբ իրականացվող) ծրագրի իրագործման աշխատանքներում և դիտարկել դրա՝ բոլոր տնամերձ այգիների վրա տարածվելու հնարավորության հարցը և արդյունքները ներկայացնել Վարչապետին.

գ. ուսումնասիրել ՀՀ Տավուշի մարզում առկա սպանդանոցների գործունեությունը խթանող հանգամանքներն ու դիտարկել այդ փորձառությունն ՀՀ այլ մարզերում ներդնելու և կիրառելու հնարավորությունը՝ սպանդանոցների գործունեության խթանման նպատակով դիտարկելով նաև դպրոցներում բաշխվող սննդակարգում տեղական միս օգտագործելու հնարավորության հարցը, և արդյունքները ներկայացնել Վարչապետին.

2.4. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի և Բարձր տեխնոլոգիական

արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանի հետ համատեղ, ջրային համակարգերի բարեփոխման համատեքստում, ուսումնասիրել ոռոգման և խմելու ջրի մեխանիկական պոմպակայաններում էլեկտրաէներգիայի և վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմամբ մղվող ջրի ծավալի տոկոսային համեմատականը, դիտարկել մեխանիկական պոմպակայաններն արևային ֆոտովոլտային կայաններով կահավորելու, արդյունքում՝ էլեկտրաէներգիա արտադրելու, կուտակելու և ոռոգման սեզոնին կուտակված էլեկտրաէներգիան պոմպակայանի գործարկման նպատակով օգտագործելու կամ Ջրային կոմիտեի կողմից ֆոտովոլտային կայան հիմնելու հնարավորության հարցերը և արդյունքները զեկուցել Վարչապետին.

2.5. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ քննարկել Աչաջուր բնակավայրի մարզադաշտի վերականգնման խնդիրը և արդյունքները զեկուցել Վարչապետին.

2.6. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի հետ համատեղ ձեռնարկել գործուն քայլեր ՀՀ ճանապարհների պատշաճ սպասարկման, ճանապարհային նշաններով կահավորման և գծանշումների թարմացման ուղղությամբ.

2.7. սպորտի նկատմամբ երիտասարդության հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի և Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի հետ համատեղ քննարկել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքում երեխաների և մեծահասակների համար լողավազան, ֆիթնես և տարբեր մարզաձևերի դասավանդման ենթակառուցվածքներ ներառող մարզահամալիր կառուցելու հնարավորության հարցը՝ դիտարկելով դրա շահագործումից հետո համայնքի սպասարկմանն ու պահպանմանը հանձնելու հարցը, և արդյունքների վերաբերյալ զեկուցել Վարչապետին.

2.8. Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Արմեն Ղուլարյանի և, անհրաժեշտության դեպքում՝ այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ քննարկել և այսուհետ բացառել պետական և սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող օբյեկտներում (առողջապահական, կրթական հաստատություններ և այլն) օգտագործված և հին գույքի տեղադրումը.

3) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոս-յանին՝

3.1. շահագրգիռ մարմինների հետ համատեղ քննարկել ՀՀ-ում հաշվառված, սակայն ՀՀ տարածքը 12 ամսից ավել ժամանակահատվածով լքած ավտոտրանսպորտային միջոցները գույքահարկի համակարգից առանձնացնելու կամ դրանց հարկումը ժամանակավորապես կասեցնելու հնարավորության հարցը (այդ թվում՝ թվայնացման տիրույթում արտացոլելով ՀՀ մուտք գործած և ՀՀ-ն լքած ավտոտրանսպորտային միջոցները), մշակել օրենսդրական փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտի նախագիծ և սահմանված կարգով ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.2. Ֆինանսների նախարարության հետ համատեղ քննարկել համայնքների տեղական հարկերի, տուրքերի և վճարների տվյալների վերաբերյալ ձևանմուշ սահմանելու հարցը, որում ըստ տարիների, համայնքների, տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակի ու դրույքաչափի՝ արտացոլված կլինեն համայնքների սեփական եկամուտներն ու դրանց հավաքագրման աճի տեմպը (ըստ դրա բաղադրիչների համապատասխան տողերի) և համապատասխան ձևանմուշը ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.3. ըստ տարիների և համայնքների՝ ՀՀ գործող օրենսդրությամբ, ինչպես նաև համայնքային հայեցողությամբ սահմանված տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակի ու դրույքաչափի, ինչպես նաև վերջին 3 տարվա ընթացքում համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման աճի տեմպի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.4. աշխատանքներ տանել ՀՀ բոլոր համայնքների հետ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղական բոլոր տեսակի հարկերի, տուրքերի և վճարների մասով դրույքաչափեր (թեկուզև ցածր չափով) սահմանելու ուղղությամբ և ձեռնարկվող քայլերի

վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.5. քաղաքացիական սպասարկման գրասենյակների հասանելիության հետ կապված խնդիրներով պայմանավորված՝ դիտարկել քաղաքացիների կողմից դիմումները (ընդ որում՝ ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմիններին, այլև պետական գերատեսչություններին ուղղված) քաղաքացիական սպասարկման գրասենյակներին առցանց եղանակով կամ բնակավայրերում՝ վարչական ղեկավարների նստավայրերի միջոցով ներկայացնելու և համապատասխան գերատեսչությանը փոխանցելու հնարավորության հարցը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.6. քննարկել ՀՀ պետական բյուջեից համայնքներին դոտացիաների և սուբվենցիաների տրամադրման մեխանիզմները (չափերը) նախորդ որոշակի ժամանակահատվածի ընթացքում գույքահարկի փաստացի հավաքագրված չափերով պայմանավորելու հնարավորության հարցը և համապատասխան առաջարկություն ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ.

3.7. հետամուտ լինել մինչև Նոյեմբերյան համայնք տանող Հ-26 (/Մ-4/ - Ենոքավան – Կարմիրգյուղ (գյուղատեղի) - /Մ-16/) հանրապետական նշանակության ճանապարհի շինարարության աշխատանքների իրականացմանը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.8. դիտարկել սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում բնակավայրերի ճանապարհները բետոնե սալիկներով սալիկապատելու դեպքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիայի չափաբաժինների (տոկոսների) էական նվազեցման, իսկ բնական քարե սալիկներով սալիկապատելու դեպքում նույն չափաբաժինների (տոկոսների) բարձրացման հնարավորության հարցը և համապատասխան առաջարկություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.9. միջոցներ ձեռնարկել մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ը Բերդ համայնքի Տավուշ բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի հետ կապված խնդիրը լուծելու ուղղությամբ և արդյունքները զեկուցել Վարչապետին.

3.10. Թթուջուր-Նավուր հանրապետական նշանակության ավոտմոբիլային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ՝ ձեռնարկել միջոցներ դեպի Բերդ համայնքի Նավուր բնակավայր տանող շուրջ 1.0 կմ երկարությամբ ճանապարհի

նորոգման ուղղությամբ և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.11. ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հետ համատեղ՝

ա. քննարկել Իջևան համայնքի ջրամբարի կարգավիճակի (ջրամբար, ավազի հանք, թե՞ զբոսաշրջային միջավայր) որոշման ու հետագա գործարկելիության հարցերը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

բ. ձեռնարկել միջոցներ Նոյեմբերյան համայնքի Ջուջեվան բնակավայրում Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից հերոսին նվիրված հուշարձանի տարածքի բարեկարգման, նստարաններով կահավորման, բացօթյա բեմի տեղադրման, աստիճանավանդակի նորոգման, նոր կարուսելի տեղադրման և անհրաժեշտ այլ աշխատանքների իրականացման ուղղությամբ և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

գ. ձեռնարկել միջոցներ Իջևան համայնքի Աչաջուր բնակավայրի օղակաձև ճանապարհն արհեստական արգելքներով (թմբիկներով, անհարթություններով) կահավորելու և գծանշումներ անցկացնելու ուղղությամբ և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

դ. քննարկել Իջևանի համայնքի Գանձաքար բնակավայրի միջնակարգ դպրոցին մոտեցնող ճանապարհի բարեկարգումը սուբվենցիոն կամ այլ ծրագրի շրջանակներում իրականացնելու հնարավորության հարցը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

ե. ուսումնասիրել դեպի «Վարդան Մամիկոնյանի կաղնի» բնության հուշարձան տանող ճանապարհի կառուցման նախագիծը, հաշվի առնել դրա վերաբերյալ Վարչապետի դիտարկումները, ուշադրության կենտրոնում պահել իրականացվող աշխատանքները և ձեռնարկվող քայլերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.12. քննարկել Իջևան համայնքի Աճարկուտ բնակավայրի միջով և Կիրանց բնակավայրի վերին հատվածով անցնող շուրջ 3.5 կմ երկարությամբ տեղական նշանակության ճանապարհի կառուցման հնարավորության հարցը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

3.13. ճանապարհների երկարակեցությունն ապահովելու, պատշաճ կերպով սպասարկելու, պահպանելու և մաքրման աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ ուսումնասիրել պետական, սուբվենցիոն կամ այլ ծրագրերի շրջանակներում կառուցվող, նորոգվող և հիմնանորոգվող ու համայնքների սպասարկմանը հանձնված մարզային (տեղական) նշանակության և ներբնակավայրային ճանապարհները և դրանց սպասարկման համար համայնքների մոտ առկա տեխնիկան, գնահատել տվյալ ճանապարհների սպասարկման համար անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկայի՝ համայնքների կարիքները և դրանց համալրման նպատակով համայնքներին աջակցություն տրամադրելու վերաբերյալ համապատասխան ծրագրային առաջարկություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

4) Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին՝

4.1. Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի հետ համատեղ քննարկել «Վարդան Մամիկոնյանի կաղնի» բնության հուշարձանին զբոսաշրջային գրավչություն հաղորդելու, Իջևան համայնքի Ակնաղբյուր բնակավայրում անհրաժեշտ ցուցանակներ ու տաղավարներ տեղադրելու, նախատեսված վայրերում զբոսաշրջիկներին պատրաստի և ձեռագործ իրեր վաճառելու, ինչպես նաև զբոսաշրջիկներին դրա վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցելու հնարավորության հարցերը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

4.2. ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հետ համատեղ քննարկել «Դիլիջանի դատաբազա» տեղեկատվական կենտրոնի հիմնման ներդրումային ծրագրի իրագործման նպատակով «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության տրամադրման ծրագիր իրականացնելու հնարավորության հարցը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

5) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին՝

5.1. ձեռնարկել գործուն քայլեր ՀՀ-ում կենսավառելիքի, մասնավորապես՝ բրիկետի և պելետի արտադրության տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ՝ ընդունելով ի գիտություն, որ սույն հանձնարարականը 2020 թվականից ի վեր տրվել է Շրջակա միջավայրի բոլոր նախարարներին, սակայն հարցը մինչ օրս լուծում չի գտել, և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

6) Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին՝

6.1. քննարկել մինչև աշխարհազորի հավաքները աշխարհազորի հրամանատարային կազմի համար իրական պայմաններին մոտ տարեկան 1-2 անգամ վարժական հավաքներ կազմակերպելու, աշխարհազորայինների մարտունակությունը բարձրացնելու նպատակով կրակային պատրաստություն անցնելու, աշխարհազորի հրամանատարային կազմի տարիքային շեմը վերանայելու (բարձրացնելու), ինչպես նաև աշխարհազորի սպայակազմին պահեստազորի սպայական նախատեսվող հավաքներին ներառելու հնարավորության հարցերը և օրենսդրական կարգավորումների վերաբերյալ իրավական ակտի նախագիծը սահմանված կարգով ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

7) Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին՝

7.1. Նոյեմբերյանի բժշկական կենտրոնի չգործող մասնաշենքի գործարկման և կահավորման ժամկետների ուշացումները կանխելու նպատակով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի հետ համատեղ ձեռնարկել համապատասխան քայլեր շինարարական աշխատանքների ավարտին զուգահեռ կոնկրետ ստանդարտներին համապատասխանող անհրաժեշտ նոր գույք ձեռքբերելու ուղղությամբ և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

8) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին՝

8.1. Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ քննարկել և լուծել Բերդ համայնքի Չորաթան բնակավայրի մարզադաշտի համար ֆուտբոլի մարզչի նախատեսման հարցը և արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

8.2. պետական կառավարման համակարգի շահագրգիռ մարմինների հետ համատեղ քննարկել Բերդ համայնքի Չորաթան բնակավայրում ֆուտբոլից զատ նաև այլ մարզաձևերի զարգացման հարցը և արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

8.3. Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի հետ համատեղ ձեռնարկել միջոցներ Իջևան համայնքի Կիրանց բնակավայրի մոդուլային դպրոցի կառուցումը, անհրաժեշտ գույքով կահավորումն ու շահագործումը մինչև 2023 թվականի սեպտեմբերի 1-ն ապահովելու ուղղությամբ և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

8.4. ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի և Դիլիջանի համայնքի ղեկավարի հետ համատեղ՝ «Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքների ավարտին զուգահեռ, գեղարվեստի մանկական դպրոցի համար ապահովել կոնկրետ ստանդարտներին համապատասխանող անհրաժեշտ նոր գույքի ձեռքբերումը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

9) Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանին՝

9.1. քննարկել Նոյեմբերյան համայնքի Դովեղ բնակավայրում կառուցվող մոդուլային դպրոցի մարզադահլիճում հանդիսատեսի համար համապատասխան նստատեղեր ապահովելու հարցը և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ.

10) ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին՝

10.1. Բերդ համայնքում մարզահամալիր կառուցելու նպատակով՝

ա. Բերդի համայնքի ղեկավարի հետ համատեղ ուսումնասիրել համայնքի հողատարածքները և համապատասխան հողատարածքի տվյալները ներկայացնել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե և Վարչապետի աշխատակազմ.

բ. երեխաների և մեծահասակների համար լողավազան, ֆիթնես և տարբեր մարզաձևերի դասավանդման ենթակառուցվածքներ ներառող մոդուլային մարզահամալիրներ կառուցելու տիպային նախագծերի հաստատումից հետո քննարկել դրանց հիման վրա Բերդ համայնքում մարզահամալիր կառուցելու հնարավորության հարցը.

10.2. Նոյեմբերյանի համայնքի ղեկավարի հետ քննարկել հետևյալ խնդիրները, գնահատել առաջնահերթությունները և առաջարկություն ներկայացնել դրանց՝ սուբվենցիոն ծրագրերով իրականացնելու համար՝

ա. Ոսկեվան բնակավայրի մշակույթի տան՝ անհրաժեշտ գույքով կահավորում.

բ. Ոսկեվան բնակավայրի չգազիֆիկացված տարածքների գազիֆիկացում.

գ. Ոսկեպար բնակավայրից դեպի Ոսկեվան բնակավայր շուրջ 3.0 կմ երկարությամբ ջրագծի անցկացում.

11) Վարչապետի աշխատակազմի տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչության պետ Կարեն Մուխսյանին՝

11.1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի և, անհրաժեշտության դեպքում՝ այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ, արոտավայրերն ինտենսիվ այգիների կամ այլ բարձրարժեք հողատեսքի (օրինակ՝ վարելահողեր, բազմամյա տնկարկներ) վերածելու հեռանկարի համատեքստում, քննարկել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ընդհանուր օգտագործման արոտավայրերով զբաղեցված հողամասերի սեփականության իրավունքով փոխանցման սահմանափակումների պահպանության նպատակահարմարության հարցը և համապատասխան առաջարկություն ներկայացնել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

19.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ